**Ուղղությունը. Տնտեսագիտություն, բակալավրիատ, առկա ուսուցում**
**Առարկա. Հանրային հատվածի տնտեսագիտություն**
**<u>Անոտացիա</u>**
**Աշխատատարությունը՝** *2 կրեդիտ, 72 ակադեմիական ժամ*
Ստուգարք

*Համառոտ նկարագրություն.* «Հանրային հատվածի տնտեսագիտություն» դասընթացը ծանոթացնում է ուսանողներին հանրային հատվածի գործունեության հիմունքների հետ, հետազոտելով դրա տեղն ու դերը տնտեսական համակարգում, դրա գործառույթները, կառավարման մեթոդները, ռեսուրսների ներգրավման աղբյուրներն և օգտագործման ուղղությունները, ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատումը, ինչպես նաև շուկայի անկատարության վերլուծության խնդիրները և հանրային եկամուտների և ծախսերի ազդեցությունը ռեսուրսների տեղայնացման և եկամտի բաշխման վրա:

Դասընթացն խորացնում է ուսանողների գիտելիքները բարեկեցության տնտեսագիտության բնագավառում, ուսումնասիրում է ոչ շուկայական որոշումների մեխանիզմները (հանրային ընտրություն), տարբեր հարկերի ազդեցությունը տարբեր շուկաներում մասնակի և ընդհանուր հավասարակշռության վրա, օպտիմալ հարկման տեսությունը, տարբեր հանրային ծախսերի տնտեսական բնույթը և հետևանքները:

Տվյալ դասընթացը անհրաժեշտ է տնտեսագիտական մասնագիտությունների բոլոր ուսանողների համար, քանի որ միկրո և մակրոտնտեսագիտության ուսումնասիրման հետ համատեղ այն համալիր պատկերացում է տալիս արդի խառը տեսակի տնտեսական համակարգի գործունեության մասին: